Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 6-Ի ԹԻՎ ԹԻՎ 132-135 ԵՎ ԱՊՐԻԼԻ 7-Ի ԹԻՎ 136 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ թիվ 132-136 որոշումների հերթական համարներից անմիջապես հետո անհրաժեշտ է նշում կատարել որոշման իրավական ակտի բնույթի մասին:

Թիվ 133 որոշման նախաբանում «հաստատված» բառի փոխարեն անհրաժեշտ է գրառել «սահմանված» բառը:

Թիվ 134 որոշման նախաբանում հղում է կատարվել ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն որոշմանը, որը ուժը կորցրել է 2021 թվականի հունվարի 1-ին: Դրա փոխարեն անհրաժեշտ է հղում կատարել ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի թիվ 1023-Ն որոշման համապատասխան դրույթին:

Թիվ 136 որոշման նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի **համապատասխան իրավասությունը** սահմանող դրույթին: Բացի այդ, բնակավայրի անվանումը թերի է գրառված:

04.05.2022թ.